«Հաստատում եմ»՝ _____

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական

համալսարանի ռեկտոր Ե. Սերոբյան

«14» նոյեմբերի 2024թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Նարե Արմենի Հովհաննիսյանի «Դպրոց-ընտանիք համագործակցության իրականացումն ընդհանուր ներառականության պայմաններում» վերնագրով ԺԳ.00.01 թվանիշով, «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Նարե Հովհաննիսյանի «Դպրոց-ընտանիք համագործակցության իրականացումն ընդհանուր ներառականության պայմաններում» թեկնածուական ատենախոսության արդիականությունը հիմնավորված է, որը պայմանավորված է արդի պայմաններում դպրոցի և ընտանիքի արդյունավետ համագործակցության, յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհատական մոտեցման ցուցաբերման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների պահանջմունքների, կարիքի ճիշտ գնահատման, դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների լիարժեք իրականացման անհրաժեշտությամբ: Գնահատելի է, երբ վերոնշյալ հարցերի վերաբերյալ բոլոր քննարկումները, դիտարկումներն ու ուսումնասիրություններն իրականացվում են ներառական ուսուցման համատեքստում:

Ներածությունում ձևակերպված է հիմնախնդիրը, սահմանված է նպատակը, առաջադրված են մի շարք խնդիրներ, ներկայացված են հետազոտական աշխատանքի մյուս բաղադրիչները, որոնք փոխկապված և փոխպայմանավորված են և տալիս են ամբողջական պատկերացում կատարված հետազոտական աշխատանքի մասին:

Ատենախոսության առաջին՝ «Կրթության կազմակերպատեսական հիմքերը համընդհանուր ներառականության պայմաններում» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում ներկայացվում են սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների կրթության և նրանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի վերաբերյալ պատմական զարգացումները, հայեցակարգային մոտեցումները, զուգահեռաբար անդրադարձ կատարելով ներառական կրթության գաղափարին, դրա զարգացմանը:

Երկրորդ՝ «Համընդհանուր ներառականությունը և օրենսդրական հիմքերը» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է Կրթության և Ներառական կրթության օրենսդրական հիմքերը, տալիս է պարզաբանումներ ներառական կրթության սահմանման, դրա առանձնահատկությունների վերաբերյալ:

Առաջին գլխի երրորդ՝ «Դպրոցի պատրաստվածությունը համընդհանուր ներառականության իրականացմանը» ենթագլխում հեղինակը ներկայացնելով ներառական կրթության իրականացման դժվարությունները դպրոցում, կարևորում է ուսուցիչների պատրաստվածության, արհեստավարժության հարցը, իրավացիորեն ոչ պակաս կարևոր խնդիր համարելով ուսուցիչների, ծնողների և դասընկերների ոչ ճիշտ վերաբերմունքը ԿԱՊԿ ունեցող աշակերտների նկատմամբ:

Ատենախոսության երկրորդ՝ «Դպրոց-ընտանիք համագործակցության մակարդակը» գլխում քննարկվում են դպրոց-ընտանիք համագործակցության բովանդակությանը, ձևերին և մեթոդներին վերաբերող հարցերը, ուշադրության արժանացնելով և վերլուծելով ԿԱՊԿ ունեցող աշակերտների կրթության կազմակերպման առանձնահատկությունները:

Առաջին՝ «Դպրոց-ընտանիք համագործակցության բովանդակությունը» ենթագլխում ներկայացվում են ընտանիքի գործառույթները, առանձնացնում է դպրոց-ընտանիք փոխգործակցության պայմանները և հիմնավորում է այն տեսակետը, որ «կրթության խնդիրների հաջող լուծումը հնարավոր է միայն դպրոցի և ընտանիքի փոխգործունեության ընթացքում»: Սա այսօր, ներառական ուսուցման պայմաններում առավել պահանջված է և արդիական:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ՝ «Դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը և մեթոդները» ենթագլխում ներկայացված են դպրոց-ընտանիք համագործակցության փուլերը, փոխգործակցության ձևերը, տրվում են

փոխգործակցության այդ ձևերի, գործընթացների վերաբերյալ պարզաբանումներ: Գնահատելի է, որ այս հարցերում հեղինակն առանձնահատուկ կարևորում է համագործակցային մանկավարժության դերը:

Երրորդ՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթության կազմակերպման առանձնահատկությունները» ենթագլխում ատենախոսն անդրադարձել է ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթության կազմակերպման խնդիրներին, այդ թվում անհատական կրթության իրականացման խնդրին, դիտարկելով առանձին կրթամասերի բովանդակությունը, հիմնավորելով դրանց փոխկապվածության անհրաժեշտությունը: Մանրամասն ներկայացված են մանկավարժական ներգործության հնարները, դրանց կիրառման նպատակները. մեխանիզմները:

Ատենախոսության երրորդ՝ «Դպրոց-ընտանիք համագործակցության իրականացման ուղղությամբ հետազոտական աշխատանք» գլխում ներկայացվում են ախտորոշիչ աշխատանքների վերաբերյալ կատարված վերլուծությունները, հեղինակի կողմից մշակված դասընթացի փորձարկման աշխատանքները, դրանց արդյունքները:

Առաջին՝ «Դպրոց-ընտանիք համագործակցության վերաբերյալ ախտորոշիչ աշխատանքների վերլուծություն» ենթագլխում ներկայացված են Վանաձորի քաղաքի հիմնական դպրոցներում ծնողների և մանկավարժների շրջանում իրականացված հարցման արդյունքների վերլուծությունները, տրվում է դրանց վերաբերյալ ընդհանուր մեկնաբանություն: Այս ենթագլխում ներկայացվում է դպրոց-ընտանիք համագործակցության մոդելը, որի կիրառությունն իրավացիորեն կարող է ապահովել դպրոց-ընտանիք համագործակցության արդյունավետությունը համընդհանուր ներառականության պայմաններում:

Երրորդ գլխի երկրորդ՝ ««Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» դասընթացը որպես ծնողների մանկավարժական լուսավորության և մանկավարժների կատարելագործման միջոց» ենթագլխում ներկայացվում է առաջարկվող դասընթացի խնդիրները, հանրակրթական դպրոցներում այդ դասընթացի անցկացման հնարավորություններն ու անհրաժեշտությունը:

Երրորդ՝ ««Դպրոց-ընտանիք համագործակցությունն ընդհանուր ներառականության համատեքստում» հատուկ դասընթացը որպես ուսանողների մասնագիտական կայացման միջոց» ենթագլխում ներկայացվում է դասընթացի կիրառման արդյունավետությունը մանկավարժական կրթության համակարգում, դրա կարևորությունը մասնագիտական գործունեության տեսանկյունից:

Չորրորդ ենթագլխում, որը կրում է «Դասընթացների փորձարկման արդյունքների վերլուծություն» վերնագիրը, ներկայացվում են վերոնշյալ դասընթացի անցկացման արդյունքում փորձարարական և ստուգիչ խմբերում կատարված հարցումների վերլուծությունը, որը հիմնավորում է մշակված դասընթացի կիրառման արդյունավետությունը:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որոնք առաջադրված խնդիրների լուծումներն են, կատարված հետազոտության վերաբերյալ ամփոփումներն են:

Նարե Արմենի Հովհաննիսյանի «Դպրոց-ընտանիք համագործակցության իրականացումն ընդհանուր ներառականության պայմաններում» թեկնածուական ատենախոսությունն ունի գիտական արժեք, տրամաբանական կառուցվածք, իսկ հետազոտության արդյունքները կարող են կիրառություն ստանալ պրակտիկայում:

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ կան որոշ նկատառումներ.

- Աշխատանքում օգտագործվում են «հաշմանդամ երեխա», «սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխա», «ԿԱՊԿ ունեցող երեխա» եզրույթները, որոնք կարելի էր հստակեցնել՝ սահմանելով դրանցից մեկը կամ երկուսը որպես հիմնական հասկացություն տվյալ հետազոտական աշխատանքի համար:
- Հետազոտողը հարցումներն անցկացրել է Վանաձորի հիմնական դպրոցներում սովորողների ծնողների և դասավանդող մանկավարժների շրջանում, սակայն կարծում ենք կարելի էր նշել, թե որ դասարաններում սովորողների ծնողների և դասավանդող մանկավարժների հետ են անցկացվել այդ հարցումները, ինչը առավելապես կամբողջացներ խնդրի վերաբերյալ մեր պատկերացումները:
- Եզրակացությունում ներկայացված առաջին առաջարկությունը հստակեցման, վերանայման կարիք ունի, քանի որ պարզաբանված չէ ինչպես է իրականացվում դասընթացի կիրառությունը դպրոցում:

- Աշխատանքում 3.2 և 3.3 ենթագլուխները կարելի էր միավորել, քանի որ երկու ենթագլխում էլ քննարկվում են հեղինակի կողմից մշակված դասընթացի կիրառությունները տարբեր հաստատություններում:
- Աշխատանքում կան որոշ մտքերի կրկնություններ, լեզվառճական որոշ անհարթություններ:

Այս նկատառումները չեն ստվերում սույն հետազոտության գիտական արժեքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին և Նարե Արմենի Հովհաննիսյանը արժանի է իր հայցած ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2024թ. նոյեմբերի 12-ի «Մանկավարժության» ամբիոնի թիվ 08 նիստում:

Նիստին մասնակցել են մ.գ.դ, պրոֆեսորներ Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտներ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Ցայլոյանը, մանկ. գիտ. թեկնածուներ Մ. Ղալաչյանը, Ա. Զադոյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ս. Համբարյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,
Մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ կ.գ.թ., դոցենտ՝ Կ. Պետրոսյան